# ԱԶԳԱՅԻՆ

Անցեալ Սեպտեմբեր ամսի 29-ին ըստ սովորութեան կատարուեց Ճեմարանի տարեկան հանդէսը. Ս. Պատարագից յետոյ Մխիթարեանք ըստ իւրաքանչիւր աստիճանի եկեղեցական զգեստուք և Ճեմարանի աշակերտները կարգաւ ուխտաւորների և Վաղարշապատու Խոզովրդեան հետ խմբուեցին ի Տէր Հանգուցեալ յաւերժայիշատակ Գէորգ Դ. Կաթուղիկոսի գերեզմանի շուրջը. ուր և կատարուեց հոգեհանգստեան կարգը և Ճեմարանի ուսանողներից Մանուկ . . . կարդաց երախտագիտական զգացմամբ ճառ։

Հանգստեան կարգը աւարտուելուց յետոյ եկեղեցական դասը նոյն հանդերձանքը «Քաջամարտիկ» շարականը երգելով ուղղուեց դէպի Ճեմարան՝ Տրդատայ կոչեցեալ դռնից դուրս գալով։

Գնացքը կանգ առաւ Ճեմարանի հիւսիսային կողմը, ուր, «Ով Սուրբ Գէորգ» շարականը երգելուց յետոյ, եկեղեցական սպասները յետ տարուեցին և հանդիսականներից ամեն մինը ըստ իւրաքանչիւր աստիճանի յատկացեալ աթոռների վերայ նստեցին։ Արժ. Յուսիկ Վարդապետ բերանացի, ուսանող Կորիւն և Հուսկ ուրիմն Տեսուչ Գեր. Գրիգոր Սրբազան Եպիսկոպոս Ազատիրեան գրաւոր ճառեր ասացին մէջ ընդ մէջ երգեցողութեամբ աշակերտաց։ Հանդէսը փակուեց Ամենապատիւ Տեղակալ Հօր բարեմաղթութեամբ և «Պահպանիչ» աղօթքով։

Սովորական տարեկան հաշիւը չըկարդացուեց, որովհետև Գեր. Գրիգոր Սրբազան Եպիսկոպոս Ազատիրեան նոր էր ստանձնել Ճեմարանի տեսչութիւնը. սակայն ինչ որ հնար չեղաւ հանդիսին ի լուր հանդիսականաց կարդալ, այն ամենատեսակները հրատարակում ենք ի գիտութիւն ընթերցողաց։

## ՏԵՂԵԿԱԳԻՐ ՃԵՄԱՐԱՆԻ 188³/₄ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ.

### ՍՐԲԱԶԱՆ ՀԱՐՔ, ԲԱՐԵՇՆՈՐՀ ԵՂԲԱՐՔ, ՄԵԾԱՊԱՏԻՒ ՈՒՍՈՒՑԻՉՔ ԵՒ ՄԵԾԱՐՈՑ ՀԱՆԴԻՍԱԿԱՆՔ.

Այսօր մենք կատարում ենք երկու յիշատակ. որոց մէկը՝ մեզ տըրտմութիւն է պատճառում, միւսն՝ ուրախութիւն, կամ ուրիշ խօսքով, այսօր մեզ համար տրտմութեան և միանգամայն ուրախութեան օր է։ Մեզ տրտմութիւն պատճառող յիշատակ ենք կատարում, ասացի,

կամ տրտմութեան օր է մեզ համար այս օրս, այն մտքով, որ չըկայ ի միջի այն մեծ անձն, որ Ճեմարանիս հիմնադիրն և պատրաստողն է՝ մեզ համար այսօրուան ուրախութիւնը, որ շատ ու շատ տարիներ Աստուծով պիտի տևի, պիտի կրկնուի. իսկ ուրախութեան օր է միանգամայն այս օրս նորա համար, որ Ճեմարանիս Տ-ՆՆ-Դ-Ի ՅԻՇ-Դ-ԼԻՆ ենք կատարում, ուրիշ խօսքով, ազգիս ուսումնակարօտ բազմաթիւ զաւակաց լուսաւորութեան, նոցա՝ իբրև նոր սերնդի՝ յառաջադիմութեան, կամ Ճեմարանիս միջոցաւ ևս ազգիս մտաւոր նորոգութեան տասնամեայ ուրախարիթ յիշատակն ենք կատարում.

Ուրեմն այսօրս երկու բան է մեր յառաջը բերում և երկու բարոյական պարտականութիւն մեզ վերայ դնում, մէկն է՝ մեծարել հանգուցեալ մեծագործ Հայրապետի Գէորգ Դ. ամենայն ազգիս կաթուղիկոսի անմոռանալի յիշատակն, երախտապարտ սրտիւ աղօթելով նորա հոգւոյ փրկութեան համար, իսկ միւսն՝ տօնելով Ճեմարանիս տասնամեայ տարեդարձն, ամենայն ջանք գործ դնել, իւրաքանչիւր ոք ըստ իւրում պաշտման և պարտականութեան, Ճեմարանիս բարւոք ընթացքի և ծաղկեալ դրութեան համար.

Մեր և այլոց ազգաց պատմութիւնն մեզ ցոյց է տալիս, որ անարգել յառաջադիմութիւն, անփոփոխ բարեվիճակ դրութիւն գրեթէ չըկայ աշխարհումս. որ և իցէ հասարակական գործի մէջ, մեծ արգելքներ անբարեյաջող հանգամանքներ գրեթէ միշտ կան ու կան իւրեանց անհաճոյ, չասեմ վնասակար հետևանքներովն.

Եթէ այսպիսի հանգամանաց անմասն չհամարենք մեզ, մենք ամենքս ևս, որոնց սրտին մօտիկ է ազգիս մէջ միակ հաստատութիւնս, այսինքն՝ Ճեմարանիս լաւ վիճակն, այնուհետև ի՞նչ կըմնայ մեզ ցանկալ և մեր գործովն ցոյց տալ, եթէ ոչ՝ ամենայն կերպով աշխատել սէր միութիւն և խաղաղութիւն պահպանել մեր մէջ, և այնպէս յառաջ տանել Ճեմարանիս բարեվիճակ դրութեան գործն.

Նուաստս, որ շատ մօտիկ օրերս ընդունել եմ ըստ բերմանց հանգամանաց և ժամանակի՝ Ճեմարանիս տեսչական պաշտօնը, որոյ պատճառաւ և անկարող գտնուեցայ պաշտօնապէս հաշիւ տալ հրապարակաւ, ստիպեալ գոլով ժամանակին թողուլ տպագրութեամբ ի լոյս ընծայել, կրկնում եմ, նուաստս իբրև տեսչական պաշտօն նոր յանձն առած մարդ, կցանկայի՝ ամենայն իրաւամբ՝ հրապարակական պաշտօնական հաշիւն՝ գո՞նէ երկրորդական բան համարել, և ուրիշ մի շատ աւելի գլխաւոր ու կարևոր հաշիւ աչքի առաջ ունենալ. այնպիսի հաշիւ, որ պարտական ենք տալու Աստուծոյ, մեր խղճի և ազգի առաջը. Այդ հաշիւը տալու վերայ մտածենք, այդ հաշիւը տալու համար պատրաստուենք. Այդ հաշիւը, որ մեր մտածութեան և պատրաստութեան առարկան պէտք է լինի՝ Ճեմարանիս բարեվիճակ և բարեյաջող դրութիւնն է, և այդ հաշիւը պատրաստելու և տալու հոգացողութիւնքն

ու աջակցութիւնն ընկնում է թէ Սինոդական անդամ Սրբազան Հարց, թէ նուաստիս, թէ Մեծապատիւ Ուսուցչաց և թէ աշակերտելոց վերայ՝ իրրև բարոյական պարտականութիւն։ Եթէ այս չորս տեսակ անձինքն ևս, մեծ ու փոքր՝ միացեալ և անբաժան ուժով չաշխատեն մտքով, և գործով միասիրտ և միահոգի, երևակայել անգամ չենք կարող ճեմարանիս բարեվիճակ դրութիւն։

Ուրեմն՝ վերջացնելով խօսքս, ի՞նչ կմնայ նուաստութեանս ասել հոգացող և աջակցող անձանց՝ մեծի և փոքրու, իւրեանց իսկ հետ միասին. կարծուիմ առանց սխալուելու՝ կմնայ ասել այն թէ՝

Նա. Սրբազան Հարք Սինոդական անդամք, ինչպէս որ ամենայն պատրաստականութիւն ցոյց են տալիս, հայրական խնամարկութեան զգացմամբ և մտածողութեամբ վերաբերուին դէպի ճեմարանն և նորա բարօրութիւնը.

Նէ՛էր՝էդ. Մեծապատիւ ուսուցիչք ամենայն սէր, աշխատութիւն և քարոյական ազդեցութիւն ունենան ճեմարանի մէջ.

Նէ՛էր՝էդ. Ամենայն աշակերտք՝ իւրեանց աշխատութեամբ, հնազանդութեամբ և բարի վարքով ջանան ճեմարանիս վիճակն միշտ բարձր, խաղաղ և անվտանգ դրութեան մէջ պահել.

Զ՝էր՝էդ. Այս երեք կողմից ևս ապահովուած լինելով ճեմարանը, կմնայ նուաստիս՝ իմ ամենայն մտածութիւնքս, հոգացողութիւնքս, աշխատութիւնքս ծառայեցնել ճեմարանի բարօրութեանն ներկայումս գուցէ և ապագայի համար։

Ուրեմն՝ ո՛վ Սրբազան Հարք, Մեծապատիւ ուսուցիչք աջակիցք իմ, և դուք սիրելի աշակերտք, ազգի ապագայ յոյսեր, ամենքս միասին մեծարոյ հանդիսականաց հետ աղաչեմք զԱստուած, որ տայ մեզ ամենեցուն մի սիրտ և մի հոգի՝ մեր պարտականութիւնները կատարելու մէջ, տայ մեզ ոյժ և կարողութիւն այնպէս կատարել մեր պարտքերը, որ պատասխանատու չմնանք Աստուծոյ, մեր խղճի և ազգի առաջը. տայ մեզ այն մեծ բարիքն, որ մենք ամեն մի տարի ուրախ և անդորր սրտով կատարենք ազգիս այս միակ մեծ հաստատութեան, ուզուիմ ասել, ճեմարանիս տարեդարձի յիշատակը, օրհնելով միանգամայն միշտ երախտագէտ սրտիւ ճեմարանիս մեծ հիմնադրի՝ երջանկայիշատակ Գէորգ Դ. ամենայն ազգիս Հայրապետի տօնելի յիշատակը. ամէն։

—

188⁄, ուսումնական շրջանի հարցաքննութիւններից յետոյ ճեմարանում եղել են 226 աշակերտ, որոնցից 179 գիշերօթիկ իսկ 47ն երթևեկ, որոնք ըստ որոշման Մանկավարժական խորհրդոյ դասաւորուած են եղել ըստ այսմ,

| Գիշերօթիկ աշակերտք ըստ դասարանաց. | Հոգեւոր | Գիշերամեղ | Հանուն | Գիշեր գիշերամեղ | Զարգացման միջոցներս | Ամբողջ |
|---|---|---|---|---|---|---|
| Գ. Լսարանից . . . . . | 10 | | | | | 10 |
| Բ. » . . . . . | 8 | | | | | 8 |
| Ա. » . . . . . | 2 | | 4 | | | 6 |
| Զ. Դասարանից . . . . . | 5 | 3 | | 2 | | 10 |
| Ե. » . . . . . | 11 | | | | | 11 |
| Դ. » . . . . . | 23 | 1 | 3 | | | 27 |
| Գ. » . . . . . | 29 | 7 | 3 | | | 39 |
| Բ. » . . . . . | 15 | 9 | 5 | | | 29 |
| Ա. » . . . . . | 19 | 3 | 1 | | 1 | 24 |
| Գ. Նախակրթարանից . . . . . | 15 | — | — | | — | 15 |
| Գիշերօթիկ աշակերտների գումար | 137 | 23 | 16 | 2 | 1 | 179 |
| Երթևեկ աշակերտք ըստ դասարանաց | | | | | | |
| Դ. Դասարանից . . . . . | 1 | | | | | 1 |
| Գ. » . . . . . | 1 | 2 | 1 | | | 4 |
| Բ. » . . . . . | 1 | 6 | 2 | | 3 | 12 |
| Ա. » . . . . . | | | 1 | | 25 | 26 |
| Գ. Նախակրթարանից . . . . | 4 | | | | | 4 |
| Երթևեկ աշակերտների գումար | 7 | 8 | 4 | | 28 | 47 |
| Ճեմարանում ուսանող բոլոր աշակերտների գումարը. | 144 | 31 | 20 | 2 | 29 | 226 |

Փոխուողների, վերաքննելիների, մնացողների և արձակուածների թուերը ցոյց են տալիս աշակերտների մտաւոր զարգացման և նոցա ջանասիրութեան աստիճանը. իսկ թէ ճեմարանը ինչ հեղինակութիւն է ստացած, կարելի է չափել նորանով, որ նորա աշակերտների թիւը ի Տէր հանգուցեալ Հիմնադրի մտադրեալ թուից շատ աւելի է. որոնց խնամարկելը ըստ նիւթականին և բարոյականին այնպիսի մի ծանր և դժուարատար գործ է, որից Մայր Աթոռս յետս պէտք է կասէր, եթէ յոյս չունենար ազգիս նիւթապէս և բարոյապէս օժանդակելու պատրաստականութեան վերայ. Այս յոյսն է միայն՝ որ 179 գիշերօթիկ աշակերտներ պահելու վստահութիւնը կարող է արդարացնել. Այդ յուսով է, որ ճեմարանիս Վարչութիւնը հաճութեամբ Սինոդի, ըստ ներելոյ հանգամանաց, պէտք է ջանայ պատսպարել իւր խնամոց ապաւինող բազմաթիւ ուսումնասէր պատանիներից յարմարաւորներին,

Ցիշենք այստեղ որ գիշերօթիկ աշակերթներից 170ը որդեգիր, իսկ 90ը թոշակատու են եղել։

—

Աշակերտների առողջական վիճակը գոհացուցիչ է եղել, որ հեռևանք է աշակերտներին մատակարարուած գոհացուցիչ սննդեանը և վայելուչ կեցութեանը։ Թէև թեթև հիւանդութիւններ պատահել են՝ սակայն, գոհութիւն Աստուծոյ, անվտանգ են անցել։ Հիւանդ աշակերտներին դարմանելու համար չեն խնայուել ոչ մի միջոց։ Հիւանդները յատուկ հիւանդանոցում ապաքինուել են Միաբանութեան և ճեմարանի համար վարձուած բժշկի ձեռքով։ բժշկական դարմաններ շուտ հասցնելու համար հիւանդանոցին կից գեղարանում անպակաս են եղել հարկաւոր դեղօրայքը։ Այս բոլոր յարմարութիւններով է, որ զանազան կլիմայի տակ ծնուած աշակերտները ցանկալի առողջութիւն են վայելում։

ճեմարանից հեռացել են

Ա. Լսարանական դասընթացք աւարտող հեաևեալ 10 ուսանողները.

1, Աղնաուրեան Մինաս՝ Ախալցխացի.
2, Զամբինեան Աբրահամ Նոր-Նախիջևանցի.
3, Ղուլիքևխեան Սարգիս Խնձորեստանցի.
4, Ցարութիւնեան Սահակ Կ. Պոլսեցի.
5, Շահիջանեան Աբրահամ Առաջաձորցի.
6, Շիլինգարեան Խաչատուր Ախալցխացի.
7, Բէքարեան Ցակովբ Անթապցի.
8, Զուլուղեան Ալէքսանդր Շուշեցի.
9, Սաֆարեան Տիգրան Նոր Արմաւիրցի, և
10, Վարդանեան Առաքել Վաղարշապատցի.

Որոնք Մանկավարժական խորհրդի որոշմամբ ուսուցիչներից կազմուած մասնաժողովին ներկայացնելով գիտութեան զանազան ճիւղերի վերաբերեալ գրաւոր ընդարձակ շարադրութիւններ՝ ստացան մրցանակագիր։

Բ. Դպրանոցական դասընթացքը աւարտող.

1, Երիցեան Ղուկաս Հին-Էվճիլարցի և
2, Երնջակեան Աղէքսանդր Փորագաշտցի.

որոնք ստացան դպրանոցի դասընթացքը աւարտելու վկայական։

Գ. ա. դասարանի երթևեկ 25 աշակերտները, որոնց ճեմարանում տեղ չլինելու համար նախակրթարանի դասընթացքը աւարտելու վկայական է տրուել։

—

Աւելորդ չեմ համարում դնել այստեղ ցուցակը, թէ ո՞ր տեղից քա- աշակերտներ են եղել ճեմարանում։

| Անուանք տեղեաց ըստ Թեմից | Գիշերվա. | Կցողվա. |
|---|---|---|
| Ա. ԱՍՏՐԱԽԱՆԻ ԹԵՄ. | | |
| Նոր Արմաւիր . . | 2 | |
| Վլադիկաւկազ . . | 1 | |
| Աստրախանի Թեմի բոլոր աշակերտաց Թիւն եղել է | 3 | |
| Բ. ԵՐԵՒԱՆԱՑ ԹԵՄ. | | |
| Երևան քաղաք . . | 10 | 3 |
| Ադիեաման . . | 1 | |
| Ալիբեկլու . . | 2 | 1 |
| Աղջաղալա . . | 1 | |
| Աշտարակ . . | 3 | |
| Ապարան . . | 5 | 1 |
| Առինջ . . . | | 1 |
| Բիւրական . . | | 1 |
| Գարաբազար . . | 1 | |
| Զէյվա . . . | 3 | |
| Իգդիր . . . | 8 | |
| Իգդիրմաւա . . | 2 | |
| Հին Էվջիլար . . | 1 | |
| Ղամարլու . . | 2 | |
| Ղուրդուղուլի . . | | 1 |
| Մարգարի գեղ . . | 1 | |
| Նոր Բայազէտ . . | 2 | |
| Վաղարշապատ . . | 14 | 5 |
| Քեօրփալու . . | 2 | |
| Փռանկանոց . . | 1 | |
| Գումար | 59 | 13 |
| Երևանի Թեմում | | |
| Ա. Ալէքսանդրապոլ քաղաքի | | |
| Խլի-Ղարաքիլիսա . | 1 | |
| Մեծ-Ղարաքիլիսա . | 2 | |
| Ալէքսանդրապոլ քաղաք | 8 | 3 |
| Գումար | 13 | 3 |
| Բ. Հին Նախիջևանի գիւղեր. | | |
| Ագուլիս . . . | 2 | |
| Աստապատ . . | 1 | |
| Հին Նախիջևան . . | 3 | |
| Փորադաշտ . . | 1 | |
| Գումար | 7 | |

| Անուանք տեղեաց ըստ Թեմից | Գիշերվա. | Կցողվա. |
|---|---|---|
| Գ. Տ-ՐԼԷ գիւղերին | | |
| Առաջաձոր . . | 1 | |
| Բռնակոթ . . | 2 | |
| Դարաբաս . . | 1 | |
| Խնձորէս . . . | 1 | |
| Տաթև . . . | 1 | 1 |
| Քաջարանց . . | 1 | |
| Գումար | 7 | 1 |
| Երևանի Թեմի բոլոր աշակերտաց Թիւն եղել է . . | 86 | 17 |
| Գ. ՂԱՐԱԲԱՂՈՒ ԹԵՄ. | | |
| Խլաթաղ գիւղ . . | 1 | |
| Մարաղա . . | 1 | |
| Նորաշէն . . | 1 | 1 |
| Շուշի քաղաք . . | 4 | |
| Փիրաջամալ . . | 1 | |
| Գումար | 8 | 1 |
| Ղարաբաղու Թեմում. | | |
| Ն-Է-Ս գիւղերին | | |
| Դաշբուլաղ . . | 1 | |
| Վարդաշէն . . | 2 | |
| Ուտէացի . . | 1 | |
| Գումար | 4 | |
| Ղարաբաղու Թեմի բոլոր աշակերտաց Թիւն եղել է | 12 | 1 |
| Գ. ՇԱՄԱԽԻՈՑ ԹԵՄ | | |
| Խաչմազ . . . | 1 | |
| Սաղիան . . . | 1 | |
| Շամախուոյ Թեմի բոլոր աշակերտաց Թիւն եղել է | 2 | |
| Ե. ՆՈՐ ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ԵՒ ԲԵՍԱՐԱԲԻՈՑ ԹԵՄ. | | |
| Թօփտի . . . | 1 | |
| Ղարասուբազար . | 2 | |
| Նիսվիթա . . | 1 | |
| Նոր Նախիջևան . | 3 | |

| Անուանք տեղեաց ըստ Թեմից | Քիմգիմ. | Դրիմիկ. |
|---|---|---|
| Քիշնև | 2 | |
| Օդեսա | 1 | |
| Օրբաղար | 1 | |
| Նոր Նախիջևանի և Բեսարաբիոյ Թեմի բոլոր աշակերտաց Թիւն եղել է | 11 | |
| **Զ. ՏՓԽԻՍԻ ԹԵՄ** | | |
| Դիլիջան | 1 | |
| Դուշէթ | 1 | |
| Զաքաթալա | 1 | |
| Մանգլիս | 1 | |
| Ջալալ-օղլի | 1 | 1 |
| Սղնախ | 1 | |
| Վարդաբլուր | 1 | |
| Տփխիս | 4 | |
| Քութայիս | 1 | |
| Գումար | 12 | 1 |
| **Տփխիսի Թեմի մէջ** | | |
| Ա. Ախալցխայի գաւառը | | |
| Ախալցխա | 2 | 1 |
| Սուլդա | 1 | |
| Գումար | 3 | |
| Բ. Գանձակի գաւառը | | |
| Գանձակ | 2 | |
| Գումար | 2 | |
| Տփխիսի Թեմի բոլոր աշակերտաց Թիւն եղել է | 17 | 2 |
| **Է. ԿԱՐՍԻ ԹԵՄ.** | | |
| Կարս քաղաք | 5 | |
| Ղզլչախչախ | 1 | |
| Գումար | 6 | |
| **ԱՐՏԱՍԱՀՄԱՆ** | | |
| **ԱՆԱՏՕԼԻԱ (Տաճկաստան)** | | |
| Աֆիոն Գարահիսար | 1 | |
| Բուրսա | 1 | |
| Իւնիա | 1 | |
| Նիկոմիդիա | 1 | |
| Շապին Գարահիսար | 2 | |
| Պիլէճիկ | 1 | |
| Տրապիզոն | 1 | |
| Քեսթահիա | 1 | |
| Գումար | 9 | |
| **ԵՒՐՈՊԱԿԱՆ ՏԱՃԿԱՍՏԱՆ** | | |
| Ադրիանուպօլիս | 1 | |
| Դարդանել | 1 | |
| Կ. Պոլիս | 7 | |
| Գումար | 9 | |
| **ԿԻԼԻԿԻԱ (Տաճկաստան)** | | |
| Անթապ | 1 | |
| Գումար | 1 | |
| **Տ-ՅԿ-Հ-Յ-Ա-Գ-Ա-Ն** | | |
| Ալաշկերտ | 1 | |
| Արապկեր | 2 | |
| Երզնկա | 1 | |
| Թօփրագ-Գալէ | 1 | |
| Հին-Բայազէտ | 1 | |
| Մուշ | 2 | 1 |
| Իւշքիլիսա | 2 | |
| Վան | 4 | 1 |
| Տիգրանակերտ | 2 | |
| Քուրդ-Ղռան | 1 | |
| Գումար | 17 | 2 |
| **ՊԱՐՍԿԱՍՏԱՆ** | | |
| Դավրէժ | 3 | |
| Խոյ | 2 | |
| Սալմաստ | 1 | |
| Գումար | 6 | |
| **ՌՈՒՄԱՆԵԱ** | | |
| Փօքշան | 1 | |
| Գումար | 1 | |

Ճեմարանի վարչութիւն կազմող անձինքն եղել են
1, Պ. Արշակ Նահապետեան՝ տեսուչ.
2, Արժ. Ղևոնդ Վարդապետ Յովակիմեան՝ աւագ վերակացու.
3, Պ. Կարապետ Տէր Մկրտչեան և
4, Պ. Գէորգ Տէր Բարդուղիմէոսեան՝ վերակացուք.
Ճեմարանիս ուսուցիչներն և նոցա շաբաթական դասերի թիւը եղել են

| | | |
|---|---|---|
| 1, Արժ. Արիստակէս Վարդ. Տէր Դաւթեան կրօնական առարկայից . . . . . | 15 | դաս. |
| 2, » Յովսէփ Վարդ. Փինաջեան Հայերէն լեզուի. | 20 | » |
| 3, » Ղևոնդ Վարդ. Յովակիմեան՝ Զայնագրութեան | 10 | » |
| 4, Պ. Կարապետ Կոստանեան Հայերէն և Եկեղեցական մատենագրութեան և Քննական քերականութեան . . | 25 | » |
| 5, Պ. Նիկողայոս Խոսրովեան՝ Ռուսերէնի, Ռուսաց գրականութեան և Ռուսաց պատմութեան. . . . | 20 | » |
| 6, Պ. Մանդէն Մանդինեան Ռուսերէնի, Ռուսաց պատմութեան և Ռուսաստանի աշխարհագրութեան . . | 15 | » |
| 7, Պ. Ստեփաննոս Պալասանեան Ֆրանսերէնի և Հայոց պատմութեան. . . . . | 23 | » |
| 8, Պ. Փիլիպպոս Վարդանեան Ընդհ. պատմ. և Ընդհ. գրական. և Գերմաներէնի . . . . . | 24 | » |
| 9, Պ. Սեդրակ Մանդինեան Մանկավարժութեան, Բարոյական փիլիսոփայութեան Հոգեբանութեան և Մեթոդիքայի | 12 | » |
| 10, Պ. Ներսէս Աբէլեան Բնագիտութեան, Հանրահաշուի և Երկրաչափութեան. . . . . | 23 | » |
| 11 Պ. Արշակ Նահապետեան Տիեզերագրութեան և Բնախօսութեան . . . . . | 4 | » |
| 12, Պ. Կարապետ Տէր Մկրտչեան *) Թուաբանութեան Հանրահաշուի և Բնական պատմութեան . . . | 13 | » |
| 13, Պ. Գէորգ Տէր Բարդուղիմէոսեան Նկարչութեան, Հայոց և Ընդհ. պատմութեան, Աշխարհագր. և Գծագրութեան | 14 | » |
| 14, Պ. Ռուբէն Ռուբենեան Տաճկերէնի . . | 5 | » |

Գ. Նախակրթարանում և Ա. դասարանում՝ լսարանականները —

—

188¹/₄ ուսումնական շրջանին Սեպտեմբերի 10 — Յունիսի 1 Մանկավարժական խորհրդոյ 20 նիստ է եղել. Ճեմարանում տարեկան քննութիւնները սկսուել են Ապրիլ ամսից և վերջացել են Մայիսի վերջին օրերին.

—

Թէև ցանկալի էր տարեկան հաշիւը 188¹/₄ շրջանի աւելի ևս մանրամասնօրէն ներկայացնել, բայց հանգամանքը, որ նոր եմ ստանձնել Ճեմարանիս տեսչութեան պաշտօնը, պարտաւորեցնում է ինձ այսքանով շատանալ.

Տեսուչ Ճեմարանի Գրիգոր Եպիսկոպոս Աղափիրեանց.

---

(*) Պ. Կ. Տէր Մկրտչեանը ճաշից յետոյ շաբաթական 3 դասով Զայնագրութիւն ևս էր ուսուցանում Բ. եւ Գ. դասարան նոր մտած եւ Զայնագրութիւն չգիտեցող աշակերտներին.

---

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ.